ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

**«Երևան Ջուր» ՓԲԸ
սպառողների ջրամատակարարման
տևողության ցուցանիշների առնչությամբ
տեղեկատվության հավաստիության մոնիթորինգի
արդյունքների մասին**

ԵՐԵՎԱՆ 2014

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2013 թվականի դեկտեմբերի 18-ի №459Լ որոշմամբ հաստատված հանձնաժողովի 2014 թվականի աշխատանքային ծրագրի 33-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը 2014 թվականի մայիսի 5-ից նոյեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում պետք է իրականացներ խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության ընտրանքային ուսումնասիրություն՝ ներկայացնելով կատարված աշխատանքների արդյունքներն ամփոփող համապատասխան վերլուծական տեղեկանք:

Նախ հարկ է նշել, որ հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 23-ի N129Ն, 2004 թվականի հունիսի 1-ի N62Ն և հոկտեմբերի 12-ի N128Ն, 2005 թվականի հուլիսի 22-ի N99Ն և N100Ն որոշումներով հաստատվել են համապատասխանաբար «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները: Վերը նշված որոշումների համաձայն, խմելու ջուր մատակարարող ընկերությունները յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 15-ը հանձնաժողով են ներկայացնում տեղեկատվություն՝ իրենց սպասարկման տարածքի ջրամատակարարման տևողության ցուցանիշների մասին՝ տվյալ և հաջորդ տարվա համար: Հանձնաժողով ներկայացվող ջրամատակարաման տևողության ցուցանիշները հենվում են ընկերությունների կողմից պարբերաբար հրապարակվող խմելու ջրի մատակարարման գրաֆիկների (այսուհետ՝ գրաֆիկ) վրա: Ընկերությունները, վերը նշված որոշումների պահանջների համաձայն, գրաֆիկները հրապարակում են տարեկան առնվազն երկու անգամ՝ տվյալ տարվա ապրիլ և սեպտեմբեր ամիսների 15-25-ն ընկած ժամանակահատվածներում, իրենց սպասարկման տարածքների բաժանորդներին հասու առնվազն մեկ օրաթերթում, որոնցից առաջինը գործում է տվյալ տարվա մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ն, իսկ երկրորդը՝ հոկտեմբերի 1-ից մինչև մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածի համար: Գրաֆիկները պետք է կազմվեն և հրապարակվեն այնպես, որ սպասարկման տարածքների ցանկացած բաժանորդ հնարավորություն ունենա ծանոթանալու իր գրաֆիկին: Հրապարակումից առնվազն երեք աշխատանքային օր առաջ ընկերությունները պարտավոր են իրենց սպասարկման տարածքների բաժանորդներին

առնվազն մեկ հեռուստաալիքով երեք օր անընդմեջ՝ օրական առնվազն երկու անգամ, նվազագույնը մեկ ժամ ընդմիջումով, ժամը 18:00-23:00-ն ընկած ժամանակահատվածում իրազեկել նոր գրաֆիկի հրապարակման ժամկետի և օրաթերթի անվանման մասին: Ընկերությունները պարտավոր են հրապարակումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ օրաթերթերի առնվազն մեկ օրինակ պատվիրված նամակով անվճար ուղարկել իրենց սպասարկման տարածքի տեղական ինքնակառավարման մարմիններ: Ընկերությունները պարտավոր են իրենց սպասարկման տարածքի բոլոր բաժանորդներին յուրաքանչյուր ամիս նախորդ ամսում սպառված ջրի դիմաց ներկայացվող վճարման փաստաթղթերում ներառել նաև տվյալ բաժանորդի հաջորդ ամսվա ջրամատակարարման նվազագույն գրաֆիկի ժամերը:

Միևնույն ժամանակ, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 25-ի «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպառողների խմելու ջրի մատակարարման ընդհատումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին» №290Ա որոշմամբ սահմանված կարգի համաձայն խմելու ջուր մատակարարող ընկերությունները յուրաքանչյուր եռամսյակի համար, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա ավարտը, հանձնաժողով են ներկայացնում տեղեկատվություններ իրենց կողմից սպասարկվող բնակավայրերի բաժանորդների խմելու ջրի մատակարարման ընդհատումների վերաբերյալ: Տեղեկատվությունները ներկայացվում են նշված կարգով հաստատված ձևին համապատասխան և հանձնաժողովի աշխատանքային ծրագրով սահմանված ժամկետներում հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայք էջում:

Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված է մոնիթորինգի նպատակով խմելու ջուր մատակարարող ընկերության և սպասարկման որակի ցուցանիշների ընտրության հիմնավորումները, ընկերության ձեռքբերումներն ու առկա խնդիրները, ինչպես նաև մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունները, ընթացքը և արդյունքերը: Վերլուծական տեղեկանքի ամփոփիչ մասում ներկայացված են եզրակացությունները և առաջարկությունները:

Սույն վերլուծական տեղեկանքի կազմման նպատակով մոնիթորինգի աշխատանքները համակարգել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ Մ. Կոշեցյանը, իսկ մոնիթորինգն իրականացվել է հանձնաժողովի աշխատակազմի զարգացման և մոնիթորինգի վարչության կողմից:

ԲԱԺԻՆ 1. Մոնիթորինգի ենթարկված խմելու ջուր մատակարարող ընկերության և սպասարկման որակի ցուցանիշի ընտրությունը

1.1 Մոնիթորինգի ենթարկված խմելու ջուր մատակարարող ընկերության ընտրությունը

ՀՀ-ում խմելու ջրի մատակարարման ոլորտում հանձնաժողովի կարգավորման դաշտում գործունեություն են իրականացնում «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ները: Աղյուսակ 1-ում նվազման կարգով ներկայացված է ընկերությունների բաժանորդների քանակը.

Աղյուսակ 1

Ընկերությունը	Բաժանորդների քանակը 2014 թվականի ջրամատակարարման տևողության ցուցանիշների հաշվարկման պահին
«Երևան Ջուր» ՓԲԸ	332163
«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	276005
«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ	52092
«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ	40531
«Նոր Ակունք» ՓԲԸ	18150

Չնայած այն հանգամանքին, որ «Երևան Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքն ընդգրկում է շուրջ 10-ն անգամ քիչ թվով համայնքների վարչական տարածքներ, քան «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի, այնուամենայնիվ ընկերություններից առավել շատ բաժանորդներ ունի «Երևան Ջուր» ՓԲԸ-ն: Հաշվի առնելով, որ 2013 թվականին մոնիթորինգն իրականացվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում, ինչպես նաև այն, որ ավելի մեծ է «Երևան Ջուր» ՓԲԸ-ի բաժանորդների քանակը, 2014 թվականին մոնիթորինգն իրականացվել է «Երևան Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում՝ խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի ցուցանիշների գնահատման նպատակով:

Հարկ է նշել, որ ի սկզբանե ջրամատակարարման տևողության նվազագույն ցուցանիշների մասով հանձնաժողովի որդեգրած քաղաքականության հիմքում նպատակ է դրվել ոչ միայն ապահովել բաժանորդների ջրամատակարարման տևողության միջին ցուցանիշի շարունակական բարելավումը, այլ նաև բարելավել բաժանորդների ջրամատակարարման տևողության նվազագույն շեմը:

1.2 Մոնիթորինգի ենթարկված սպասարկման որակի ցուցանիշի ընտրությունը

«Երևան Ջուր» ՓԲԸ-ի համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի ցուցանիշները սահմանված են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 23-ի N129Ն որոշմամբ: Սպասարկման որակի ցուցանիշներն են.

1. Ջրամատակարարման տևողության ցուցանիշները, ներառյալ դրանց վերաբերյալ բաժանորդներին իրազեկման ընթացակարգը,

2. Ջրամատակարարման պլանային և վթարային ընդհատումների ցուցանիշները, ներառյալ դրանց իրազեկման ընթացակարգը:

Սպասարկման որակի վերը նշված ցուցանիշներից այս պահին բաժանորդների տեսանկյունից ամենազգայունը ջրամատակարարման տևողության ցուցանիշն է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերության սպասարկման տարածքում բաժանորդների ջրամատակարարումն իրականացվում է պարբերաբար հրապարակվող գրաֆիկների համաձայն: Գրաֆիկների հրապարակման և վերջինիս մասին իրազեկման ընթացակարգը ներկայացված է սույն վերլուծական տեղեկանքի նախաբանում:

Սույն վերլուծական տեղեկանքի շրջանակում մոնիթորինգն իրականացվել է «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից 2014 թվականի ապրիլի 24-ին «Եթեր» շաբաթաթերթում հրապարակված ջրամատակարարման գրաֆիկներին առնչվող տեղեկատվության հավաստիությունը ընկերության սպասարկման տարածքի համար պարզելու նպատակով: Նշենք նաև, որ «Երևան Ջուր» ՓԲԸ-ն Կոտայքի մարզի Նոր Հաճն, Արարատի մարզի Ազատաշեն և Արագածոտնի մարզի Հարթավան համայնքներին մատուցում է մեծածախ ջրամատակարարման ծառայություն:

1.3 Մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը

Երևան Ջուր» ՓԲԸ-ն մանրածախ ջրամատակարարում է իրականացնում Երևան և Եղվարդ քաղաքներում, ինչպես նաև թվով 29 գյուղական համայնքներում, հետևաբար ընտրանք չի կիրառվել և մոնիթորինգն իրականացվել է բոլոր 31 համայնքների համար:

Մոնիթորինգի իրականացման մեթոդաբանություններն ընտրվել են ելնելով այն հանգամանքից, որ «Երևան Ջուր» ՓԲԸ-ի 332163 բաժանորդների ընդհանուր թվից 305196-ը (91,9%-ը) բաժին են ընկնում Երևան քաղաքին, իսկ 26967-ը (8,1%-ը)՝ Եղվարդ քաղաքին և 29 գյուղական համայնքներին: Երևան քաղաքում մոնիթորինգն

իրականացվել է լոգերների գրանցած ցուցմունքների հիման վրա, իսկ Եղվարդ քաղաքում և 29 գյուղական համայնքներում՝ հարցման միջոցով:

Հարցումը կազմակերպվել է համայնքների ղեկավարների շրջանում՝ տվյալ համայնքում հրապարակված ջրամատակարարման գրաֆիկի մասին վերջիններիս իրազեկված լինելու, ինչպես նաև հրապարակված ջրամատակարարման գրաֆիկներին առնչվող տեղեկատվության համապատասխանությունը փաստացի ջրամատակարարման տևողության ցուցանիշներին պարզելու նպատակներով:

Հարցումը համայնքների ղեկավարների շրջանում իրականացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջիններս առավել իրազեկված են իրենց համայնքների ջրամատակարարման գրաֆիկների մասին, քան բնակիչները, ինչը մեր կարծիքով հնարավորություն կտա ունենալ առավել համապարփակ գնահատական:

Երևան քաղաքի պարագայում մոնիթորինգն իրականացվել է լոգերների գրանցած ցուցմունքների հիման վրա՝ այն բազմաբնակարան շենքերի և առանձնատների համար, որոնցում Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իականացման գրասենյակ» ՊՀ-ն սույն թվականի հունիս ամսվա ընթացքում մոնիթորինգ է իրականացրել և արդյունքները ներկայացրել է նաև հանձնաժողով:

ԲԱԺԻՆ 2. «Երևան ջուր» ՓԲԸ-ի ձեռքբերումներն ու առկա խնդիրները

2.1 «Երևան ջուր» ՓԲԸ-ի գործունեության արդյունք հանդիսացող ձեռքբերումներն ու առկա խնդիրները

Զգալի են խմելու ջրի մատակարարման ոլորտում «Երևան ջուր» ՓԲԸ-ի գործունեության տարիների ձեռքբերումները: Մասնավորապես, շոշափելի դրական արդյունքներ են գրանցվել ջրամատակարարման տևողության և շարունակականության, ինքնահոս եղանակով ջրամատակարարում ունեցող բաժանորդների քանակի (ի հաշիվ մեխանիկական եղանակով ջրամատակարարում ունեցող բաժանորդների քանակի նվազման), հասույթի և հավաքագրման մակարդակի աճի, էլեկտրական էներգիայի ծախսի, ջրառի նվազման և այլ մասերով: Բաժանորդների սպասարկման որակի բարելավման նպատակով ընկերության կողմից ներդրվել է նաև 1-85 կարճ հեռախոսահամարով տեղեկատվական ծառայությունը և ստեղծվել են բաժանորդների սպասարկման գրասենյակներ:

Սակայն միևնույն ժամանակ առկա են նաև որոշակի բացթողումներ, թերություններ և լուծումներ պահանջող այլ խնդիրներ: Առկա խնդիրներից են

հրապարակվող ջրամատակարարման գրաֆիկների որոշ դեպքերում իրականությանը չհամապատասխանելը և դրանց խախտումները, լոգերների տվյալների հիման վրա հաշվարկվող շարունակականության ցուցանիշների գոյություն ունեցող իրական պատկերի ոչ լիարժեք արտահայտելը, դիմում բողոքներին և հարցադրումներին պատասխանելու ժամկետների խախտումները, մատակարարվող խմելու ջրի ճնշման համար նախատեսված ցուցանիշներից շեղումները, բաժանորդների քանակի տատանումները, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Նոր խարբերդ ամառանոցային թաղամասի, Եղվարդ քաղաքի և որոշ գյուղական համայնքների ջրամատակարարման նվազագույն տևողության ցածր ցուցանիշները և խմելու ջրի դեռևս մեծ կորուստները:

Վերլուծական տեղեկանքում վերը նշվածներից առավել մանրամասնվել են հանձնաժողովի կողմից սահմանվող՝ իրականացված մոնիթորինգի հիմքում դրված ջրամատակարարման տևողության ցուցանիշները:

2.2 «Երևան ջուր» ՓԲԸ-ի գործունեության տարիների ջրամատակարարման տևողության ցուցանիշները

«Երևան ջուր» ՓԲԸ-ի կողմից պարբերաբար հրապարակվող ջրամատակարարման գրաֆիկների և ըստ այդ գրաֆիկների հանձնաժողով ներկայացվող բաժանորդների քանակի հիման վրա յուրաքանչյուր տարի վերանայվում են ջրամատակարարման նվազագույն տևողության ցուցանիշները:

«Երևան ջուր» ՓԲԸ-ի համար հանձնաժողովի կողմից յուաքանչյուր տարի սահմանվող ջրամատակարարման նվազագույն տևողությունների շարժն ըստ տարիների ներկայացված է աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2

Երևան քաղաք												
Տարին	4 ժամ և ավելի		6 ժամ և ավելի		8 ժամ և ավելի		12 ժամ և ավելի		17 ժամ և ավելի		24 ժամ	
2007թ.	100%	283122	93%	262497	70%	199437	50%	140310	40%	112385	37%	104240
2008թ.	100%	287178	93%	266364	72%	207662	53%	151696	43%	124285	37%	106449
2009թ.	100%	287326	94%	270977	78%	223045	59%	169174	51%	145456	43%	124279
2010թ.	100%	299591	97,3%	291554	88,9%	266351	69,9%	209398	65,7%	196714	54,8%	164267
2011թ.	-	-	-	-	100%	299413	74,7%	223549	68,5%	205234	58,3%	174689
2012թ.	-	-	-	-	-	-	100%	291770	79,1%	230689	64,3%	187544
2013թ.	-	-	-	-	-	-	100%	296645	86,3%	256085	69,8%	206958
2014թ.	-	-	-	-	-	-	100%	305196	93,1%	284081	73,3%	223592

Եղվարդ քաղաք և գյուղական համայնքներ												
2007թ.	100%	24413	80%	19466	66%	16024	40%	9847	8%	1961	8%	1961
2008թ.	100%	23562	84%	19680	76%	17809	45%	10701	29%	6864	29%	6864
2009թ.	100%	26824	74%	19828	67%	18047	42%	11229	27%	7181	27%	7181
2010թ.	100%	26785	74,0%	19794	68,1%	18214	45,2%	12107	33,8%	9037	33,8%	9037
2011թ.	100%	26156	74,5%	19498	73,2%	19155	49,7%	13003	38,6%	10090	38,6%	10090
2012թ.	100%	26768	76,1%	20383	73,9%	19782	51,1%	13688	47,8%	12792	47,7%	12757
2013թ.	100%	26140	70,8%	18500	68,5%	17899	53,6%	14013	50,2%	13177	50,0%	13082
2014թ.	100%	26967	71,0%	19144	68,8%	18543	54,1%	14599	50,8%	13699	50,7%	13664

Աղյուսակ 2-ում բերված ցուցանիշներից երևում է, որ Երևան քաղաքի բաժանորդների համար 2007-2014 թվականների ընթացքում ջրամատակարարման նվազագույն տևողությունները շարունակական և կտրուկ տեմպերով աճել են: Աճն ակնհայտ է ինչպես շուրջօրյա ջրամատակարարման, այնպես էլ նվազագույն շեմի մասով: Ընդ որում, եթե 2007-2010 թվականների ընթացքում նվազագույն շեմը 4-ժամյա էր, ապա 2011 թվականին՝ 8-ժամյա, իսկ 2012 թվականից՝ 12-ժամյա: Դրան զուգահեռ աճել է նաև շուրջօրյա ջրամատակարարում ունեցող բաժանորդների թիվը՝ 2014 թվականին կազմելով բոլոր բաժանորդների 73,3%-ը, որը 2007 թվականին ընդամենը 37% էր: Նախատեսվել է 2015 թվականի մայիսի 1-ից Երևան քաղաքում բաժանորդների 93,3%-ին ժամը 7:00-24:00-ն ընկած ժամանակահատվածում ապահովել անընդհատ, իսկ 84,3%-ին շուրջօրյա ջրամատակարարմամբ:

Դրական տեղաշարժը համեմատաբար քիչ է Եղվարդ քաղաքի և գյուղական համայնքների պարագայում՝ բոլոր բաժանորդներն ունեն նվազագույնը 4-ժամյա, որից 50,7%-ը՝ շուրջօրյա ջրամատակարարում, ընդ որում 2007 թվականին բաժանորդների ընդամենը 8% էր ապահովված շուրջօրյա ջրամատակարարմամբ:

Հարկ է նշել, որ 2007 և 2008 թվականներին Եղվարդ քաղաքի համար ջրամատակարարման տևողության նվազագույն ցուցանիշները սահմանվել են առանձին տողով, ըստ որոնց՝ 2007 թվականին բոլոր բաժանորդները ժամը 7^{00}-24^{00}-ն ընկած ժամանակահատվածում պետք է ապահովվեին նվազագույնը 2-ժամյա, իսկ 2008 թվականին բաժանորդների 9%-ը՝ 2-ժամյա, 91%-ը՝ 4-ժամյա (որից ընդամենը 3%-ը՝ 6-ժամյա) ջրամատակարարմամբ: Սկսած 2009 թվականից Եղվարդ քաղաքի և գյուղական համայնքների համար սահմանվել են ջրամատակարարման նվազագույն տևողության 4-ժամյա շեմ:

2013 թվականին տեղի է ունեցել ճշգրտում և Նոր խարբերդ ամառանոցային թաղամասի թվով 1060 բաժանորդները, որոնք մինչ այդ հաշվարկվում էին Նոր

Խարբերդ համայնքի բաժանորդների հետ՝ 8-ժամյա ջրամատակարարման գրաֆիկով, հանվել են բաժանորդների ընդհանուր թվից և չեն հաշվարկվում ջրամատակարարման նվազագույն տևողություններում և շարունակականության ցուցանիշներում: Թաղամասը 2009 թվականից հանդիսանում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի տարածք և ջրամատակարարում է ստանում 2-ժամյա գրաֆիկով՝ բաժանորդների մի մասի համար ժամը 7:00-9:00-ն, իսկ մյուս մասինը՝ 9:00-11:00-ն ընկած ժամանակահատվածում: Երևան քաղաքում նման նվազագույն տևողությամբ ջրամատակարարման առկայությունը պայմանավորված է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի, «Երևան ջուր» ՓԲԸ-ի և «Վեոլիա Օ-Քոմփանի Ժենեղալ դեզ Օ» ընկերության միջև դեռևս 2009 թվականի սեպտեմբերի 3-ին կնքված՝ «Երևան ջուր» ՓԲԸ-ին վարձակալությամբ գույք հանձնելու մասին թիվ 36 համաձայնագրով, որի 5-րդ կետի պայմաններից են նաև.

« - Մինչև Նոր Խարբերդի ջրամատակարարման ցանցի վերակառուցման համար անհրաժեշտ լրացուցիչ ներդրումների ներգրավումը և բաժանորդների առնվազն 50%-ի կողմից ջրաչափերի տեղադրումը՝ «Երևան ջուր» ՓԲԸ-ն կապահովի նվազագույնը 2-ժամյա ջրամատակարարում,

-Նշված տարածքի ջրամատակարարման ցուցանիշները չեն ներառվի «Երևան ջուր» ՓԲԸ-ի ջրամատակարարման շարունակականության ցուցանիշների հաշվարկում, քանի դեռ չեն ավարտվել լրացուցիչ կապիտալ ներդրումները:»

Ընկերության կողմից պարբերաբար հրապարակվող ջրամատակարարման գրաֆիկների և ըստ այդ գրաֆիկների հանձնաժողով ներկայացվող բաժանորդների քանակի հիման վրա հաշվարկվող շարունակականության ցուցանիշների շարժն ըստ տարիների ներկայացված է աղյուսակ 3-ում.

Աղյուսակ 3

«Երևան ջուր» ՓԲԸ-ի ջրամատակարարման նվազագույն շարունակականության մեծություններն ըստ տարիների (ժամ)							
2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
13,86	14,45	15,38	17,58	18,29	20,00	20,72	21,26

Աղյուսակ 3-ում բերված ջրամատակարարման շարունակականության ցուցանիշները նույնպես խոսում են «Երևան ջուր» ՓԲԸ-ի այս մասով ևս գրանցած մեծ առաջընթացի մասին: Ընկերության բոլոր բաժանորդների ջրամատակարարման նվազագույն շարունակականությունը 2007 թվականի 13,86 ժամի համեմատ 2014 թվականին աճել է 7,40 ժամով՝ կազմելով 21,26 ժամ:

ԲԱԺԻՆ 3. Մոնիթորինգի իրականացումը և դրա արդյունքները

3.1 Մոնիթորինգի հարցումների իրականացումը

Սույն թվականի մայիսի 23-ից 31-ն ընկած ժամանակահատվածում «Երևան ջուր» ՓԲԸ-ի կողմից 2014 թվականի ապրիլի 24-ին հրապարակված և փաստացի գործող խմելու ջրի մատակարարման գրաֆիկների համապատասխանության վերաբերյալ գրավոր հարցումներ են կատարվել Եղվարդ քաղաքի և 29 գյուղական համայնքների ղեկավարներից: Ըստ մարզերի կատարված հարցումների քանակները բերված են աղյուսակ 4-ում.

Աղյուսակ 4

Մարզը	Կատարված հարցումների քանակն ըստ մարզերի (հատ)
1	*2*
Արագածոտն	3
Արարատ	6
Արմավիր	2
Կոտայք	19
Ընդամենը	30

Բոլոր 30 համայնքների ղեկավարները հարցմանը պատասխանել են գրավոր՝ նշելով, որ ստացել են հրապարակված գրաֆիկները: Եղվարդ քաղաքի և թվով 28 գյուղական համայնքների ղեկավարները հարցումներին պատասխանել են ՝ նշելով, որ ստացել են հրապարակված գրաֆիկների մասին տեղեկատվությունը և հայտնել են, որ խմելու ջրի մատակարարման փաստացի գործող գրաֆիկները համապատասխանում են վերջին անգամ հրապարակվածին: Իսկ Կոտայքի մարզի Զովունի համայնքի ղեկավարի հունիսի 2-ի №138 պատասխան գրությունից պարզվեց, որ հրապարակված 4-ժամյա ջրամատակարարման գրաֆիկը պահպանվում է, իսկ ժամը 7:00-11:00-ն ընկած մատակարարման ժամանակահատվածը՝ ոչ և ըստ գյուղի տարբեր թաղամասերի ջրամատակարարումն իրականացվում է տարբեր ռեժիմներով: Հանձնաժողովը նշված խախտման վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով հունիսի 23-ի №ՄԿ-1303Լ գրությամբ դիմել է «Երևան Ջուր» ՓԲԸ-ին: Որին ի պատասխան ընկերությունն օգոստոսի 1-ի №ԳԳ/4515 պատասխան գրությամբ ներկայացրել է ըստ գյուղի թաղամասերի ճշտգրտված ռեժիմներով նոր 4-ժամյա ջրամատակարարման գրաֆիկը՝ հրապարակելով նաև «Եթեր» շաբաթաթերթի հուլիսի 10-ի համարում: Ինչից հետո Զովունի համայնքի ղեկավարի կողմից ի լրումն հրապարակված գրաֆիկի խախտման առնչությամբ նոր բողոք չի ներկայացվել:

Հարցման միջոցով մոնիթորինգի ենթարկված համայնքների, նրանց ջրամատակարարման գրաֆիկների և բաժանորդների քանակի, համայնքների ղեկավարների, հարցումների ուղարկման ու պատասխանների ստացման ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունները բերված են հավելված 1-ում.

Այսպիսով, ըստ հարցումների միջոցով իրականացված մոնիթորինգի վերջնարդյունքի՝ Եղվարդ քաղաքի և 29 գյուղական համայնքների ջրամատակարարման փաստացի գործող գրաֆիկները համապատասխանում են վերջին անգամ հրապարակվածին և բոլոր համայնքների ղեկավարները ստացել են հրապարակված գրաֆիկները: Սակայն Կոտայքի մարզի Եղվարդ, Քասախ և Արարատի մարզի Փարաքար համայնքների ջրամատակարարման գրաֆիկների վերաբերյալ բնակիչներից հանձնաժողով ստացված առանձին բողոքներից և դրանց «Երևան Ջուր» ՓԲԸ-ի տված պարզաբանումներից ակնհայտ է դառնում, որ որոշ համայնքներում դեռևս առկա են ջրամատակարարման հետ կապված լուծումներ պահանջող առանձին խնդիրներ:

3.2 Մոնիթորինգի իրականացումը Երևան քաղաքում

Ինչպես արդեն նշվել է, Երևան քաղաքում մոնիթորինգն իրականացվել է այն բազմաբնակարան շենքերի և առանձնատների համար, որոնցում Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իականացման գրասենյակ» ՊՀ-ն սույն թվականի հունիս ամսվա ընթացքում մոնիթորինգ է իրականացրել և արդյունքները ներկայացրել է նաև հանձնաժողով: Համաձայն ներկայացված տեղեկատվության ուսումնասիրությունները կատարվել են Երևան քաղաքի թվով 405 հասցեներում, որոնցից, «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հավաստիացմամբ, 47-ը լոգերներով վերահսկվող սպասարկման տարածքներից դուրս են, իսկ 120-ի դեպքում ջրամատակարարումն իրականացվում է պոմպերով: Հետևաբար մոնիթորինգն իրականացվել է մնացած 238 բազմաբնակարան շենքերի և առանձնատների համար:

Նշված 238 հասցեներում մեթոդաբանական այլ մոտեցմամբ ուսումնասիրություններ կատարելու միջոցով ջրամատակարարման խախտումների առնչությամբ հավաստիացում ունենալու նպատակով լոգերների ցուցմունքների վրա հիմնված դիտարկումը կրկին իրականացվել է 2014 թվականի հունիս ամսվա համար:

Հարկ է նշել, որ ըստ «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հավաստիացումների Երևան քաղաքի թվով 305196 բաժանորդից 279343-ը կամ բաժանորդների ընդհանուր թվի 91,5%-ն է գտնվում լոգերներով վերահսկվող վարչական տարածքներում, իսկ

մնացած 25853 բաժանորդի կամ բաժանորդների ընդհանուր թվի 8,5%-ի ջրամատակարարումը լոգերներով չի վերահսկվում: Ընդ որում լոգերներով վերահսկվող վարչական տարածքներում գտնվող բաժանորդներից 66097-ի կամ բաժանորդների ընդհանուր թվի 21,6%-ի ջրամատակարարումն իրականացվում է 475 հատ պոմպի միջոցով: Հետևաբար 213246 բաժանորդի կամ բաժանորդների ընդհանուր թվի 69,9%-ի ջրամատակարարումն է լոգերներով վերահսկելի՝ այն էլ ոչ ամբողջական:

«Երևան Ջուր» ՓԲԸ-ի հավաստիացմամբ Երևան քաղաքում մոնիթորինգի իրականացման ժամանակահատվածում տեղակայված է եղել թվով 66 լոգեր: Նշված 238 հասցեները հնարավորություն են տվել դիտարկել թվով 44 լոգերի կամ բոլոր լոգերների 66,7%-ի գրանցած ցուցմունքները: Պետք է նշել, որ.

- ոչ բոլոր ընդհատումներն է հնարավոր ի հայտ բերել լոգերների գրանցած ցուցմունքներով, որովհետև լոգերներով վերահսկվող տարածքներում հնարավոր է լինեն ավելի փոքր ընդհատումներ և մատակարարվող խմելու ջրի ճնշման համար պահանջվող ցուցանիշներից շեղումներ, որոնք տեխնիկապես հնարավոր չէ նկատել, սակայն կարելի է արձանագրել այլ միջոցներով,
- դիտարկումը չի բացառում նաև այն փաստը, որ ուսումնասիրված լոգերների տարածքներում հնարավոր է լինեն բաժանորդներ, որոնք ունեն ավելի շատ տևողությամբ ջրամատակարարում, քան ուսումնասիրված որոշ հասցեներ, կամ որոնց բնակարանների տեղակայման վայրերն ավելի բարձր են, քան դիտարկվածների:

Հիմնավորումներից ակնհայտ է դառնում, որ առավել ընդգրկուն մոնիթորինգի դեպքում ջրամատակարարման հրապարակված գրաֆիկների ավելի շատ շեղումներ կարձանագրվեն: Դրա մասին է վկայում նաև հանձնաժողովի և «Համայնքային զարգացման ծրագրերի իականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացված մոնիթորինգների ստորև ներկայացված համեմատական արդյունքները:

Թվով 238 բազմաբնակարան շենքերի և առանձնատների համար «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից 2014 թվականի ապրիլի 24-ին «Եթեր» շաբաթաթերթում հրապարակված ջրամատակարարման գրաֆիկներում առկա տեղեկատվության համապատասխանությունը փաստացի գրանցված արդյունքների հետ համեմատելու նպատակով իրականացված մոնիթորինգից պարզվեց, որ դրանցից 180-ում 2014 թվականի հունիս ամսվա ջրամատակարարման փաստացի գրաֆիկներն ըստ էության համապատասխանել են հրապարակվածին: Իսկ մնացած 58-ում կամ ամբողջի 24,4%-ում, որոնք գտնվում են մոնիթորինգի ենթարկված լոգերներից

գրեթե կեսի՝ թվով 21 լոգերներով վերահսկվող տարածքներում, գրանցվել են տարբեր տևողություններով շեղումներ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունները բերված են հավելված 2-ում:

Նշենք, որ «Համայնքային զարգացման ծրագրերի իականացման գրասենյակ» ՊՀ-ի իրականացրած մոնիթորնգի ընթացքում գրանցվել է թվով 38 խախտումներ: Նշված խախտումներից 2-ը վերաբերվում են լոգերներով վերահսկվող սպասարկման տարածքներից դուրս գտնվող, իսկ 6-ը՝ պոմպերով ջրամատակարարում ունեցող տարածքներին: Լոգերներով վերահսկվող տարածքներում գրանցված մնացած 30 խախտումներից 2-ը վերաբերվում են ջրի ցածր ճնշումներին, որոնք չափվել են ներքին ցանցերում (ծորակներում), ինչից չի կարելի եզրակացնել, որ տվյալ հասցեներում ջրամատակարարման գրաֆիկները խախտվել են: Իսկ 3 հատը հրապարակված գրաֆիկներում բազմաբնակարն շենքերի հասցեների բացակայության մասին են, որոնք ներառվել են «Եթեր» շաբաթաթերթի հուլիսի 10-ի համարում ի լրումն հրապարակված գրաֆիկներում և ըստ այդ գրաֆիկների 3-ից 2-ի դեպքում նույնպես ստացվում է գրաֆիկի խախտում: Վերջնարդյունքում լոգերներով վերահսկվող տարածքների համար ստացվում է թվով 27 խախտում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մոնիթորինգի արդյունքները գրանցվել են բաժանորդների կարծիքի հիման վրա, ուստի այստեղ ևս չպետք է բացառել խախտումների ներքին ցանցերում առկա խնդիրներով և այլ գործոններով պայմանավորված լինելու տարբերակները:

Լոգերներով վերահսկվող տարածքներում «Համայնքային զարգացման ծրագրերի իականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում գրանցված թվով 27 ջրամատակարարման գրաֆիկների խախտումներից 6-ն է հաստատվել լոգերների ցուցմունքների հիման վրա կատարված ուսումնասիրություններով, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես ընկերության սպասարկման տարածքից դուրս գտնվող (ներքին) ցանցերում առկա խնդիրներով, այնպես էլ լոգերներից հետո տարբեր պատճառներով գրանցվող խմելու ջրի մատակարարման ընդհատումներով և ճնշումների անկումներով:

ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի 2003 թվականի ապրիլի 17-ի «Ջրամատակարարման համակարգերի ջրատարների, ջրմուղի ցանցերի և ջրի մաքրման կայանների տեխնիկական շահագործման կանոնները հաստատելու մասին» N047-Ն հրամանի 1-ին կետով հաստատված՝ ջրամատակարարման համակարգերի ջրատարների, ջրմուղի ցանցերի և ջրի մաքրման կայանների տեխնիկական շահագործման կանոնների 4-րդ կետով սահմանված

պահանջների համաձայն. «Ջրամատակարարման համակարգերի տեխնիկական շահագործումն իրականացվում է սպառողներին անհրաժեշտ քանակի և պահանջվող որակի ջրով ապահովելու նպատակով, և այդ համակարգերը պետք է աշխատեն հուսալի և անխափան: Ջրմուղի ցանցում ազատ ճնշումը պետք է լինի նվազագույնը 10 մ, առավելագույնը՝ 60 մ:»

Հարկ է նշել, որ «Երևան Ջուր» ՓԲԸ-ն աջակցել է մոնիթորինգի իրականացմանը և հանձնաժողով է ներկայացրել անհրաժեշտ բոլոր տեղեկատվությունը: Բազմաբնակարան շենքերի պարագայում մոնիթորինգն իրականացվել է ամբողջ շենքի համար՝ ելնելով շենքի հողի նիշի ծովի մակերևույթից ունեցած բարձրություններից և շենքի ջրամատակարարման ապահովման համար պահանջվող ճնշման մեծություններից: «Երևան Ջուր» ՓԲԸ-ն ճնշման մեծությունները հաշվարկել է հետևյալ բանաձևով.

$$P=(n-1)*h+p_0+L,$$

որտեղ՝ n-ը շենքի հարկերի քանակն է,

h-ը հարկի բարձրությունը (3մ),

p_0-ն հաշվարկային սարքի անհրաժեշտ ճնշումը,

L-ը շենքի հողի նիշը:

Ինչպես երևում է հավելված 2-ից, Երևան քաղաքում դեռևս առկա են խմելու ջրի մատակարարման հրապարակված գրաֆիկներից շեղումներ, որոնք հայտնաբերվել են Աջափնյակ, Շենգավիթ, Նոր Նորք, Կենտրոն, Քանաքեռ-Զեյթուն, Արաբկիր և Նորք-Մարաշ վարչական շրջանների տարածքներում:

Իրավիճակն առավել խոցելի է պոմպերով ջրամատակարարում ունեցող բաժանորդների մոտ, որոնց ջրամատակարարման ընդհատումների ընդհանուր պատճառներին գումարվում են նաև պոմպերի անխափան աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ գործոնները՝ էլեկտրաէներգիայի ընդհատումները, պոմպերի խափանումները և այլն: Դրա մասին են վկայում նաև Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում պոմպերով ջրամատակարարում ունեցող բաժանորդների մոտ գրանցված գրաֆիկների խախտումներից 4 հատի առնչությամբ «Երևան Ջուր» ՓԲԸ-ի ներկայացրած պարզաբանումները: Մասնավորապես, «Երևան Ջուր» ՓԲԸ-ի մեկնաբանմամբ՝ իրականացվելիք ներդրումների ոչ ընկերության մեղքով ուշացման

պատճառով թվով 8 պոմպեր չեն փոխարինվել առավել արդիականներով, որի հետևանքով դրանցով ջրամատակարարում ունեցող թվով 770 բաժանորդի համար հրապարակված 24-ժամյա գրաֆիկը լիարժեք չի ապահովվում և այդ պոմպերից 3 հատի դեպքում (522 բաժանորդ) ջրամատակարարումն իրականացվում է նվազագույնը 17-ժամյա, իսկ 5 հատի դեպքում (248 բաժանորդ)՝ 12-ժամյա գրաֆիկներով:

Հատկանշական է, որ ջրամատակարարման տևողության աճին զուգընթաց փոխվում են բաժանորդների սպասելիքներն ու պահանջմունքները, մեծանում է հանրային վերահսկողությունը սպասարկման որակի այլ ցուցանիշների մասով՝ ջրամատակարարման ընդահատումների տևողության, ջրի որակի, դիմում-բողոքներին, հարցումներին պատասխանելու ժամանակահատվածի և այլն: Ուստի, ընկերության համար այս ուղղություններով ևս մեծանում է աշխատանքների արդյունավետության շարունակական բարելավման և հանրության առջև անընդհատ հաշվետու լինելու պահանջարկը: Այս համատեքստում փաստենք, որ «Երևան Ջուր» ՓԲԸ-ն յուրաքանչյուր ամիս մամուլում հրապարակում է նախորդ ամսվա իր գործունեության արդյունքները (աղբյուրներից վերցված ջրաքանակի, սպառված էլեկտրաէներգիայի, ջրամատակարարման շարունակականության, ջրի որակի և ամսվա ընթացքում կատարված տարաբնույթ այլ աշխատանքների վերաբերյալ), ինչպես նաև հրապարակում է յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը, ինչը հանրությանը մատակարարի գործունեության մասին իրազեկելու առումով խմելու ջրի ոլորտում նոր դրական մոտեցում է:

Ջրամատակարարման գրաֆիկների խախտումների, գրություններին ուշացումով պատասխանելու, 1-85 ծառայության աշխատանքի՝ այդ թվում նախատեսվող ընդհատումների մասին բաժանորդներին իրազեկելու և այլ հարցերի վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող բողոքների առնչությամբ ընկերությունը տալիս է պարզաբանումներ՝ երբեմն ըստ էության ընդունելով բողոքի էությունը, ինչը նույնպես փաստում է սպասարկման որակի մասով առկա խնդիրների մասին:

Գրաֆիկների և մատակարարվող խմելու ջրի ճնշման խախտումների վերաբերյալ ստացվող բողոքների պատճառներն ընկերության կողմից երբեմն վերագրվում են իր սպասարկման տարածքից դուրս գտնվող (ներքին) ցանցերին:

ԲԱԺԻՆ 4. Եզրակացություններ և առաջարկություններ

4.1 Եզրակացություններ

1. Զգալի են խմելու ջրի մատակարարման ոլորտում «Երևան ջուր» ՓԲԸ-ի գործունեության ձեռքբերումները: Ջրամատակարարման նվազագույն տևողության ցուցանիշների բարելավման արդյունքում Երևան քաղաքում բաժանորդների 100%-ն ունեն 12-ժամյա, իսկ 73,3%-ը (2015 թվականի մայիսի 1-ից նախատեսվել է 84,3%-ը)՝ շուրջօրյա ջրամատակարարում: Դրական տեղաշարժը համեմատաբար քիչ է Եղվարդ քաղաքի և գյուղական համայնքների պարագայում՝ բաժանորդների 100%-ն ունեն նվազագույնը 4-ժամյա, իսկ 50,7%-ը՝ շուրջօրյա ջրամատակարարում: «Երևան Ջուր» ՓԲԸ-ի բոլոր բաժանորդների ջրամատակարարման նվազագույն շարունակականության ներկայիս ցուցանիշը նույնպես խոսում է մեծ առաջընթացի մասին՝ 21,26 ժամ:

2. Եղվարդ քաղաքի և թվով 29 գյուղական համայնքների ղեկավարները հարցումներին պատասխանել են ՝ նշելով, որ ստացել են հրապարակված գրաֆիկների մասին տեղեկատվությունը և հայտնել են, որ խմելու ջրի մատակարարման փաստացի գործող գրաֆիկները համապատասխանում են վերջին անգամ հրապարակվածին: Սակայն Կոտայքի մարզի Եղվարդ, Քասախ և Արարատի մարզի Փարաքար համայնքների ջրամատակարարման գրաֆիկների վերաբերյալ բնակիչներից հանձնաժողով ստացված առանձին բողոքներից և դրանց «Երևան Ջուր» ՓԲԸ-ի տված պարզաբանումներից ակնհայտ է դառնում, որ որոշ համայնքներում դեռևս առկա են ջրամատակարարման հետ կապված լուծումներ պահանջող առանձին խնդիրներ:

3. Երևան քաղաքի թվով 238 բազմաբնակարան շենքերի և առանձնատների ջրամատակարարման մասով իրականացված մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ դրանցից 180-ում փաստացի գործող ջրամատակարարման գրաֆիկներն ըստ էության համապատասխանել են հրապարակվածին, իսկ մնացած 58-ում գրանցվել են տարբեր շեղումներ:

4. Երևան քաղաքի թվով 305196 բաժանորդից 279343-ը կամ բաժանորդների ընդհանուր թվի 91,5%-ն է գտնվում լոգերներով վերահսկվող տարածքներում, իսկ

մնացած 25853 բաժանորդի կամ բաժանորդների ընդհանուր թվի 8,5%-ի ջրամատակարարումը լոգերներով չի վերահսկվում:

5. Ընդհանուր առմամբ հարկ է եզրակացնել, որ լոգերներով որոշվող ջրամատակարարման տևողության շարունակականության ցուցանիշը ամբողջությամբ չի արտացոլում ջրամատակարարման իրական տևողության պատկերը, քանի որ պոմպերով ջրամատակարարում ունեցող բաժանորդների պարագայում ջրամատակարարման ընդհատումների ընդհանուր պատճառներին գումարվում են նաև պոմպերի անխափան աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ գործոնները՝ էլեկտրաէներգիայի ընդհատումները, պոմպերի խափանումները և այլն: Օրինակ, իրականացվելիք ներդրումների ուշացման պատճառով թվով 8 պոմպեր չեն փոխարինվել առավել արդիականներով, որի հետևանքով դրանցով ջրամատակարարում ունեցող թվով 770 բաժանորդի համար հրապարակված 24-ժամյա գրաֆիկը լիարժեք չի ապահովվում և այդ պոմպերից 3 հատի դեպքում (522 բաժանորդ) ջրամատակարարումն իրականացվում է նվազագույնը 17-ժամյա, իսկ 5 հատի դեպքում (248 բաժանորդ)՝ 12-ժամյա գրաֆիկներով:

4.2 Առաջարկություններ

Հաշվի առնելով կատարված մոնիթորինգի արդյունքները առաջարկում ենք.

1. Մոնթորինգի արդյունքները ներկայացնել ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե: Միևնույն ժամանակ առաջարկում ենք վերանայել և հստակեցնել ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի 2003 թվականի ապրիլի 17-ի «Ջրամատակարարման համակարգերի ջրատարների, ջրմուղի ցանցերի և ջրի մաքրման կայանների տեխնիկական շահագործման կանոնները հաստատելու մասին» N047-Ն հրամանի 1-ին կետով հաստատված՝ ջրամատակարարման համակարգերի ջրատարների, ջրմուղի ցանցերի և ջրի մաքրման կայանների տեխնիկական շահագործման կանոնների 4-րդ կետի (4. «Ջրամատակարարման համակարգերի տեխնիկական շահագործումն իրականացվում է սպառողներին անհրաժեշտ քանակի և պահանջվող որակի ջրով ապահովելու նպատակով, և այդ համակարգերը պետք է աշխատեն հուսալի և անխափան: Ջրմուղի ցանցում ազատ ճնշումը պետք է լինի

նվազագույնը 10 մ, առավելագույնը՝ 60 մ:») մատակարարվող խմելու ջրի ճնշման վերաբերյալ պահանջը՝ **բազմաբնակարան շենքերի յուրաքանչյուր հարկում անհրաժեշտ նվազագույն ճնշում սահմանելու համար:**

2. Մոնթորինգի արդյունքները ներկայացնել Երևանի քաղաքապետարան՝ կարևորելով նաև Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի մեջ մտնող Նոր Խարբերդ ամառանոցային թաղամասի ջրամատակարարման խնդրին կրկին անգամ անդրադառնալու և այն հնարավորինս շուտ լուծելու անհրաժեշտությունը:

3. Հստակեցնել ընկերության սպասարկման տարածքը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեծածախ ջրամատակարարում ստացող համայքներում ջրամատակարարումն իրականացվում է ոչ թե ընկերության, այլ համայնքի կողմից: Անհրաժեշտ է լրացում կատարել հանձնաժողովի 2006 թվականի մայիսի 30-ի N88Ա որոշման 2-րդ կետով հաստատված «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության ջրային համակարգի օգտագործման N0008 թույլտվության պայմաններում:

4. Ընկերությանը հանձնարարել իր իրավասության շրջանակներում և հնարավորության սահմաններում ձեռնարկել միջոցներ Եղվարդ քաղաքում և գյուղական համայնքներում գործող ջրամատակարարման 4-ժամյա նվազագույն տևողության շեմի բարձրացման նպատակով:

5. Ընկերությանը հանձնարարել լրացուցիչ միջոցներ ձեռնարկել բաժանորդների մոտ՝ մատակարարվող խմելու ջրի ճնշման կարգավորման նպատակով, իսկ սույն վերլուծական տեղեկանքի հավելված 2-ում նշված բաժանորդների համար 2015 թվականին սահմանել մշտադիտարկման ռեժիմ և մինչև 2015 թվականի հոկտեմբերի 1-ը հանձնաժողով ներկայացնել ամփոփ հաշվետվություն փաստացի վիճակի մասին:

Հավելված 1

№	Մարզը, համայնքը, համայնքի ղեկավարը	2014 թվականի ապրիլի 24-ին հրապարակված ջրամատակարարման գրաֆիկը և բաժանորդների քանակը	Հանձնաժողովի ելից գրության համարը և ամսաթիվը	Համայնքի ղեկավարի պատասխան գրության մտից համարը և ամսաթիվը
1	*2*	*3*	*4*	*5*
1.	Կոտայքի մարզ, Եղվարդ, Նորայր Սարգսյան	Անտառտնտեսություն՝ 24 ժամ (26 բաժ.)	№ՄԿ-1094 Լ 31.05.2014թ.	№1818 18.06.2014թ.
		Երևանյան՝ 8:00-10:30 և 20:00-22:30՝ 5 ժամ (689 բաժ.)		
		Նալբանդյան, Թումանյան, Գագարին, Սևակ, Աբովյան, Էրեբունի, Նար-Դոս, Գայի, Սայաթ-Նովա, Ծիրանանոց, Իսահակյան, Հովհաննիսյան, Կոմիտաս, Սաֆարյան, Զաքարյան 1-160՝ 8:00-12:00՝ 4 ժամ (1654 բաժ.)		
		Շահումյան, Սպանդարյան, Տերյան, Խանջյան՝ 8:00-12:00 և 17:00-21:00՝ 8 ժամ (239 բաժ.)		
		Արարատյան՝ 8:00-12:00 և 20:00-22:00՝ 6 ժամ (16 բաժ.)		
		Թարգմանչաց, Շինարարներ, Ղազարյան, Կնունյանց, Շիրակ, Պռոշյան, Ռաֆֆի, Չարենց, Շիրազ, հյուրանոց՝ 8:00-12:00 և 19:30-22:30՝ 7 ժամ (515 բաժ.)		
		Անդրանիկ, Ազատամարտիկներ՝ 9:00-15:00՝ 6 ժամ (70 բաժ.)		
		Բանավան, Նատի, հանրակացարան՝ 11:00-15:00՝ 4 ժամ (120 բաժ.)		
		Առափնյա, Նժդեհ, կայարան՝ 13:00-17:00՝ 4 ժամ (70 բաժ.)		
		Արա Գեղեցիկ՝ 17:00-21:00՝ 4 ժամ (149 բաժ.)		
2.	Կոտայքի մարզ, Առինջ, Գագիկ Սարգսյան	Սամսոնոիդ և Դուրյան թաղամասեր՝ 24 ժամ (109 բաժ.)	№ՄԿ-1093 Լ 31.05..2014թ.	№1931 26.06.2014թ.
		«Ա» և «Բ» թաղամասեր, Ս. Առինջեցու, Զինավան, Զագսի հողեր, Նոր, Տանձանոց, Մնացականյան, Բաղրամյան, Մաշտոցի, Ձագավան, Սևահող, 1-ից 17-րդ, 19, 21, 23-րդ փողոցներ, 3-րդ փողոց 1-ին նրբանցք՝ 7:00-12:00 և 18:00-23:00՝ 10 ժամ (2192 բաժ.)		
3.	Կոտայքի մարզ, Արամուս, Հրայր Նիկողոսյան	24 ժամ (774 բաժ.)	№ՄԿ-1026 Լ 23.05.2014թ.	№1675 04.06.2014թ.
4.	Կոտայքի մարզ, Բալահովիտ, Կամո Գրիգորյան	7:00-12:00 և 18:00-23:00՝ 10 ժամ (981 բաժ.)	№ՄԿ-1027 Լ 23.05.2014թ.	№1707 06.06.2014թ.
5.	Կոտայքի մարզ, Գետամեջ, Ավետիս Մուրադյան	24 ժամ (328 բաժ.)	№ՄԿ-1028 Լ 23.05.2014թ.	№1687 05.06.2014թ.
6.	Կոտայքի մարզ, Զովունի, Սերժիկ Ավետիսյան	7:00-11:00 ՝4 ժամ (1474 բաժ.)	№ՄԿ-1029 Լ 23.05.2014թ.	№1688 05.06.2014թ.
7.	Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր, Քաջիկ Ասատրյան	24 ժամ (185 բաժ.)	№ՄԿ-1030 Լ 23.05.2014թ.	№1970 30.06.2014թ.
8.	Կոտայքի մարզ, Մայակովսկի, Վահագն Բարսեղյան	24 ժամ (488 բաժ.)	№ՄԿ-1031 Լ 23.05.2014թ.	№1999 02.07.2014թ.

9.	Կոտայքի մարզ, Մրգաշեն, Արամայիս Արամյան	8:00-20:00՝ 12 ժամ (585 բաժ.)	№ՄԿ-1032 Լ 23.05.2014թ.	№1969 30.06.2014թ.
10.	Կոտայքի մարզ, Նոր Արտամետ, Յուրա Հովհաննիսյան	24 ժամ (394 բաժ.)	№ՄԿ-1089 Լ 31.05.2014թ.	№1746 11.06.2014թ.
11.	Կոտայքի մարզ, Նոր Գեղի, Ֆրոնտիկ Թևոսյան	24 ժամ (1630 բաժ.)	№ՄԿ-1033 Լ 23.05.2014թ.	№1708 06.06.2014թ.
12.	Կոտայքի մարզ, Նոր Երզնկա, Ալինա Հարությունյան	24 ժամ (375 բաժ.)	№ՄԿ-1034 Լ 23.05.2014թ.	№1626 30.05.2014թ.
13.	Կոտայքի մարզ, Պռոշյան, Արթուր Մուրադյան	24 ժամ (1254 բաժ.)	№ՄԿ-1035 Լ 23.05.2014թ.	№1676 04.06.2014թ.
14.	Կոտայքի մարզ, Պտղնի, Առաքել Վիրաբյան	24 ժամ (557 բաժ.)	№ՄԿ-1092 Լ 31.05.2014թ.	№1706 06.06.2014թ.
15.	Կոտայքի մարզ, Ջրվեժ, Ռոբերտ Պետրոսյան	24 ժամ (1755 բաժ.)	№ՄԿ-1036 Լ 23.05.2014թ.	№1678 04.06.2014թ.
16.	Կոտայքի մարզ, Գետարգել, Արսեն Կարապետյան	7:00-12:00 և 18:00-23:00՝ 10 ժամ (194 բաժ.)	№ՄԿ-1090 Լ 31.05.2014թ.	№1933 26.06.2014թ.
17.	Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, Գևորգ Պողոսյան	Նորավան թաղամաս՝ 17 ժամ (35 բաժ.) Մնացած տարածքները՝ 24 ժամ (304 բաժ.)	№ՄԿ-1091 Լ 31.05.2014թ.	№1717 09.06.2014թ.
18.	Կոտայքի մարզ, Քանաքեռավան, Ջիվան Քամալյան	24 ժամ (875 բաժ.)	№ՄԿ-1037 Լ 23.05.2014թ.	№1627 30.05.2014թ.
19.	Կոտայքի մարզ, Քասախ, Արա Մկրտչյան	24 ժամ (1679 բաժ.)	№ՄԿ-1038 Լ 23.05.2014թ.	№1664 03.06.2014թ.
20.	Արագածոտնի մարզ, Ջրամբար, Գարիկ Գևորգյան	24 ժամ (55 բաժ.)	№ՄԿ-1039 Լ 23.05.2014թ.	№2036 07.07.2014թ.
21.	Արագածոտնի մարզ, Սաղմոսավան, Ներսես Ավագյան	24 ժամ (85 բաժ.)	№ՄԿ-1040 Լ 23.05.2014թ.	№2058 08.07.2014թ.
22.	Արագածոտնի մարզ, Ուշի, Հոմբերտ Աթոյան	10:00-18:00՝ 8 ժամ (338 բաժ.)	№ՄԿ-1041 Լ 23.05.2014թ.	№1931 26.02.2014թ.
23.	Արարատի մարզ, Արգավանդ, Գագիկ Օրդուխանյան	24 ժամ (518 բաժ.)	№ՄԿ-1042 Լ 23.05.2014թ.	№1649 02.06.2014թ.
24.	Արարատի մարզ, Բարձրաշեն, Սուրիկ Սարգսյան	24 ժամ (326 բաժ.)	№ՄԿ-1043 Լ 23.05.2014թ.	№1998 02.07.2014թ.
25.	Արարատի մարզ, Գեղանիստ, Վաչիկ Ադիլխանյան	24 ժամ (734 բաժ.)	№ՄԿ-1044 Լ 23.05.2014թ.	№1636 31.05.2014թ.
26.	Արարատի մարզ, Դիտակ, Սուրեն Սրապոյան	24 ժամ (110 բաժ.)	№ՄԿ-1045 Լ 23.05.2014թ.	№1997 02.07.2014թ.
27.	Արարատի մարզ, Նոր Խարբերդ, Կամո Կակոյան	8:00-10:00 և 18:00-20:00՝ 4 ժամ (1162 բաժ.) Զոնալ թաղամաս՝ 24 ժամ (215 բաժ.)	№ՄԿ-1046 Լ 23.05.2014թ.	№1677 04.06.2014թ.

28.	Արարատի մարզ, Ջրաշեն, Արտյոմ Ղազարյան	24 ժամ (398 բաժ.)	№ՄԿ-1047 Լ 23.05.2014թ.	№1857 23.06.2014թ.
29.	Արմավիրի մարզ, Մերձավան, Լևոն Գրիգորյան	8:00-12:00՝ 4 ժամ (786 բաժ.)	№ՄԿ-1048 Լ 23.05.2014թ.	№1990 02.07.2014թ.
30.	Արմավիրի մարզ, Փարաքար, Սամվել Վարդանյան	Գյուղ Փարաքար՝ 18:00-22:00՝ 4 ժամ (1719 բաժ.)	№ՄԿ-1049 Լ 23.05.2014թ.	№1705 06.06.2014թ.
		Գյուղ Թաիրով՝ 24 ժամ (218 բաժ.)		

№	Հասցեն, հեռախոսահամարը	Շենքի բարձրությունը (հարկ)	2014 թվականի ապրիլի 24-ին հրապարակված ջրամատակարարման գրաֆիկը	Շենքի հողի նիշը ծովի մակերևույթից (մ)	Շենքի համար պահանջվող ճնշումը (մ)	Լոգերի համարը և տեղակայման վայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	Լոգերների ցուցմունքների հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքները
1	*2*	*3*	*5*	*6*	*7*	*8*	*9*
Մալաթիա-Սեբաստիա							
1	Արարատյան 1զ., 16շ.	5	7:00-13:00 18:00-24:00	945	967	N55 (949մ)	Ամսվա ընթացքում ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից ցածր և տատանվել է -1-ից 9մ-ի միջակայքում
2	Արարատյան 1զ., 14շ.	5	7:00-13:00 18:00-24:00	945	967		
3	Արարատյան 1զ., 12շ.	5	7:00-13:00 18:00-24:00	944	966		
4	Արարատյան 2զ., 17շ.	9	7:00-13:00 18:00-24:00	928	962		
5	Արարատյան 1զ., 10շ.	5	7:00-13:00 18:00-24:00	941	963		
Էրեբունի							
6	Էրեբունի 37շ.	5	7:00-13:00 18:00-24:00	998	1020	N83 (1004մ)	Ամսվա ընթացքում ժամը 23:00-ից 24:00-ն ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից ցածր և տատանվել է -7-ից 9մ-ի միջակայքում, իսկ հունիսի 10-13-ը ժամը 12:00-ից 13:00-ն՝ տատանվել է 2-ից 9մ-ի միջակայքում
Աջափնյակ							
7	Նորաշեն թաղ. 25շ.	16	շուրջօրյա	1113	1168	N12A (1102մ)	Ամսվա ընթացքում ժամը 0:00-ից 7:00-ն և հունիսի 9-ին ժամը 13:30-ից 18:00-ն ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից ցածր և տատանվել է -66-ից 9մ-ի, իսկ հունիսի 15 և 21-ին ժամը 22:00-ից 23:30-ն՝ -8-ից 9մ-ի միջակայքում
8	Նորաշեն թաղ. 30շ.	16	շուրջօրյա	1110	1165		
9	Նազարբեկյան թաղ. 4շ.	9	շուրջօրյա	1074	1108		
10	Նազարբեկյան թաղ.25շ.	14	շուրջօրյա	1088	1137		
11	Բաշինջաղյան 2 նրբ.10շ.	16	շուրջօրյա	1072	1127		
12	Բաշինջաղյան 2 նրբ. 8շ.	16	շուրջօրյա	1071	1126		
13	Բաշինջաղյան 188շ.	16	շուրջօրյա	1073	1128		
14	Բաշինջաղյան 192շ.	16	շուրջօրյա	1076	1131		
15	Հասրաթյան 25/4շ.	4	շուրջօրյա	1028	1047	N16 (1028մ)	Հունիսի 5-ին ժամը 13:00-ից 18:30-ն ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է 10մ-ից ցածր և տատանվել է -3-ից 9մ-ի միջակայքում
16	Մարգարյան 4շ.	4	շուրջօրյա	1090	1109	N12 (1100մ)	Ամսվա ընթացքում ժամը 0:30-ից 4:30-ն ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից ցածր և տատանվել է -1-ից 9մ-ի միջակայքում:
	Մարգարյան 4շ.	4	շուրջօրյա				
17	Մարգարյան 6շ.	4	շուրջօրյա	1094	1113		
Շենգավիթ							
18	Բագրատունյաց 4շ.	5	շուրջօրյա	915	937	N74 (924մ)	Ամսվա ընթացքում ժամը 0:00-ից 5:00-ն ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից ցածր և տատանվել է 4-ից 9մ-ի միջակայքում
	Բագրատունյաց 4շ.	5	շուրջօրյա				
19	Արարատյան 90շ.	4	7:00-24:00	895	914	N77	Հունիսի 30-ին ժամը 20:00-ից 23:30-ն

20	Աէրացիա 1/10շ.	9	շուրջօրյա	883	917	(905մ)	ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից ցածր և տատանվել է 0-ից 7մ-ի միջակայքում:
21	Աէրացիա 2/1շ.	5	շուրջօրյա	890	912		
22	Արարատյան 85 տուն	ս/ս	7:00-24:00	901	911		
23	Արարատյան 62շ.	4	7:00-24:00	906	925		
Նոր Նորք							
24	Նանսենի 9շ.	12	7:00-24:00	1290	1333	N40 (1297մ)	Ամսվա ընթացքում ժամը 12:30-ից 24:00-ն ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից ցածր և տատանվել է -26-ից 9մ-ի միջակայքում
25	Ն. Ստեփանյան 13շ.	5	շուրջօրյա	1339	1361	N42 (1340մ)	Ամսվա ընթացքում ժամը 0:30-ից մինչև 5:30 ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից ցածր և տատանվել է -7-ից 9մ-ի միջակայքում
26	Նոր Նորք 3զ., 19Աշ.	9	շուրջօրյա	1320	1354	N41 (1310մ)	Հունիսի 3-ին ժամը 0:30-ին ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է -11մ, իսկ հունիսի 1-ին ժամը 11:30-ին՝ 1մ
27	Նոր Նորք 6զ., 32շ.	5	շուրջօրյա	1323	1345		Հունիսի 3-ին ժամը 0:30-ին ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է -2մ
28	Նոր Նորք 8զ., 36շ.	9	7:00-24:00	1339	1373	N44A (1333մ)	Ամսվա ընթացքում ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից ցածր և տատանվել է -19-ից 9մ-ի միջակայքում
29	Նոր Նորք 9զ., 24շ.	9	շուրջօրյա	1275	1309	N44 (1301մ)	Հունիսի 3-ին ժամը 1:00-ից 6:00-ն ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է 10մ-ից ցածր և տատանվել է -15-ից 9մ-ի միջակայքում
30	Նոր Նորք 9զ., 46շ.	9	շուրջօրյա	1295	1329		
31	Նոր Նորք 9զ., 12շ.	9	շուրջօրյա	1287	1321		
32	Նոր Նորք 9զ., 14շ.	9	շուրջօրյա	1276	1310		
33	Նոր Նորք 9զ., 20շ.	9	շուրջօրյա	1292	1326		
37	Մայակ 1շ.	5	շուրջօրյա	1400	1422	N47B (1401մ)	Ամսվա ընթացքում ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից ցածր և տատանվել է -15-ից 9մ-ի միջակայքում
38	Մայակ 1շ.	5	7:00-13:00 18:00-24:00	1400	1422		Հունիսի 1 և 22-ին ժամը 19:00-ից 23:00-ն ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից ցածր և տատանվել է -15-ից 9մ-ի միջակայքում
39	Բանավան 10շ.	9	7:00-13:00 18:00-24:00	1385	1419		
40	Բանավան 1Աշ.	9	7:00-13:00 18:00-24:00	1385	1419		
34	Մայակ 27շ.	9	7:00-13:00 18:00-24:00	1404	1438		
35	Մայակ 2շ.	5	7:00-13:00 18:00-24:00	1387	1409		
36	Բանավան 1շ.	4	7:00-13:00 18:00-24:00	1386	1405		
Կենտրոն							
41	Պուշկին 15շ.	9	շուրջօրյա	993	1027	N62 (1008մ)	Ամսվա ընթացքում ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից ցածր և տատանվել է 4-ից 9մ-ի միջակայքում
42	Սարյան 1շ.	5	շուրջօրյա	1006	1028		
Քանաքեռ–Զեյթուն							
43	Սարկավագի 54/5շ.	9	7:00-24:00	1293	1327	N31 (1317մ)	Հունիսի 17-22-ը ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից ցածր և տատանվել է -17-ից 9մ-ի միջակայքում
44	Սարկավագի 129/3շ.	5	7:00-24:00	1323	1345		
45	Սարկավագի 123/2շ.	5	7:00-24:00	1316	1338		
46	Սարկավագի 123շ.	5	7:00-24:00	1315	1337		
47	Սարկավագի 127շ.	3	7:00-24:00	1319	1335		
48	Ահարոնյան 12շ.	5	շուրջօրյա	1213	1235	N32	Հունիսի 23-ին ժամը 0:00-ից 5:00-ն

49	Ահարոնյան 10շ.	5	շուրջօրյա	1218	1240	(1226մ)	ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից ցածր և տատանվել է -4-ից 9մ-ի միջակայքում:
Արաբկիր							
50	Քեռու 58/1շ.	10	7:00-24:00	1076	1113	N20 (1103մ)	Հունիսի 1, 7, 8, 14, 15, 18 և 29-ին ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից ցածր և տատանվել է 2-ից 9մ-ի միջակայքում:
51	Կասյան 8շ.	5	7:00-24:00	1089	1111		
52	Քանաքեռ հէկ 10շ.	5	շուրջօրյա	1208	1230	N24 (1213մ)	Հունիսի 17-18-ին ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից և տատանվել է -3-ից 9մ-ի միջակայքում, իսկ հունիսի 5-ին ժամը 10:00-ին և 10:30-ին՝ -6մ և -4մ, հունիսի 14-ին ժամը 16:00-ին՝ -3մ
53	Բաբայան 16աշ.	5	շուրջօրյա	1140	1162	N25 (1153մ)	Հունիսի 1-3, 10, 11, 16-26-ը ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից և տատանվել է 4-ից 9մ-ի միջակայքում
Նորք-Մարաշ							
54	Հովսեփյան 10/3շ.	4	շուրջօրյա	1175	1194	N48B (1175մ)	Հունիսի 12-ից ժամը 9:30-ից մինչև հունիսի 13-ը ժամը 5:30-ն ջրի ճնշումը վերջին հարկի հատակին եղել է նաև 10մ-ից և տատանվել է -8-ից 9մ-ի միջակայքում, իսկ հունիսի 21-ին ժամը 14:30-ին եղել է -6մ
55	Նորքի Այգիներ տ. 181	ս/ս	շուրջօրյա	1171	1181		Հունիսի 12-ին ժամը 10:00-ից 24:00-ն ջրի ճնշումը ջրմուղի ցանցում ցածր է եղե 10մ-ից և տատանվել է 5-ից 9մ-ի միջակայքում
56	Հովսեփյան տ. 180	ս/ս	շուրջօրյա	1178	1188		Հունիսի 12-ից ժամը 9:30-ից մինչև հունիսի 13-ը ժամը 5:30-ն ջրի ճնշումը ջրմուղի ցանցում ցածր է եղել 10մ-ից և տատանվել է 0-ից 9մ-ի միջակայքում
57	Նորք 13փ., տ. 47	ս/ս	շուրջօրյա	1233	1243	N48C (1231մ)	Ամսվա ընթացքում ջրի ճնշումը ջրմուղի ցանցում բազմիցս ցածր է եղել 10մ-ից և տատանվել է 0-ից 9մ-ի միջակայքում
58	Նորքի 2 նրբ., տ. 20	ս/ս	7:00-13:00 18:00-24:00	1208	1218	N48D (1172մ)	